«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**14.03.2025թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Անի ՖԱ» ՀԿ**
Առաջնություն՝	**Մ-14Ը տարիքային խմբի առաջնություն**
Վարույթ՝	**Մ- 14Ը-1**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է Մ- 14Ը-1 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2025 թվականի մարտի 13-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2024թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։